ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/80-2023
ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄՈՏ ԿԱՅԱՑԱԾ՝
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ
12 ապրիլի 2023 թվական

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝

Փոխվարչապետ	Տ. Խաչատրյան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ
Խորհրդի անդամներ՝

Էկոնոմիկայի նախարար	Վ. Քերոբյան
Էկոնոմիկայի նախարարի տեղակալ	Ռ. Գևորգյան
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հայաստանյան ներկայացուցչության գրասենյակի ղեկավար	Գ. Ավսալկացի
«Ինժեներական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն	Ա. Սալաթյան
«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն	Հ. Զոբանյան
«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ	Ա. Խաչատրյան
«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն	Գ. Գրիգորյան
«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	Ս. Ասատրյանց
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	Հ. Զաքոյան
«Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ	Հ. Ֆանյան
«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն	Լ. Մնացականյան
«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիներ» հասարակական կազմակերպություն	Ն. Մանուկովա
«Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն	Հ. Ավագյան
«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն	Կ. Զաքարյան
«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ	Լ. Օհանեսյան

Խորհրդատվական ձայնի իրավունքով մասնակիցներ՝

Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան	Ջ. Գալազեր
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի ղեկավար	Ա. Ադիլխանյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ	Ա. Մարտիրոսյան
Ֆինանսների նախարարի տեղակալ	Ա. Պողոսյան
Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ	Ա. Մանուկյան
Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ	Գ. Գևորգյան
Կենտրոնական բանկի խորհրդի անդամ	Ա. Մանուկյան
Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ	Հ. Կարապետյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական	Ա. Գասպարյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի օգնական	Լ. Առաքելյան
Ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ	Օ. Ալավերդյան
Պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ	Լ. Հարությունյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ	Ժ. Սարգսյան
Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանության ներկայացուցիչ	Լ. Սարգսյան
Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանության թարգմանիչ	Ս. Կանանյան
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հայաստանյան ներկայացուցչության գրասենյակի թարգմանիչ	Ա. Պողոսյան
«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ	Է. Ղազարյան

«Ինժեներական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ	Գ. Մելիքյան

Քարտուղարության անդամներ՝

Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետ	Լ. Հակոբյան
Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի պետ	Հ. Հովհաննիսյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար	Հ. Պատվականյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու	Հ. Մալխասյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ	Դ. Աղաջանյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի տնտեսագետ	Ռ. Սարուխանյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի հանրային կապերի պատասխանատու	Հ. Սողոմոնյան
ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող	Վ. Կամարյան

Օրակարգի քննարկումը.

1. Նիստը վարողի կողմից առաջարկվեց հաստատել Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի հերթական նիստի օրակարգը:

2. «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Հակոբ Ավագյանի առաջարկությամբ՝ օրակարգում ներառվեցին 2 լրացուցիչ հարց՝ Պետական եկամուտների կոմիտեի կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և ՓՄԶ զարգացման խորհրդի գործունեության ձևաչափի վերաբերյալ:

Օրակարգային հարց 1՝ Նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման ընթացքի ներկայացում.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) ՎՋԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը՝ ներկայացնելով առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների պարբերաբար չկատարումը կանխարգելող կարգավորումների շուրջ տարվող աշխատանքների, հեռավար և համակցված հեռավար եղանակով աշխատանքի կանխատեսելի և ճկուն օրենսդրական կարգավորումների ներդրման նպատակով շրջանառության մեջ դրված օրենքի նախագծի, ՍԵՑՖ (Simple Agreement for Future Equity - SAFE) պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծման մասով կատարված աշխատանքների և դրանց արդյունքում մշակված նախագծի, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից շահաբաժինների վճարման կարգավորումների պարզեցմանն ուղղված օրենքի նախագծի, ինչպես նաև գործատուի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված պատասխանատվության վերանայման հնարավորության վերաբերյալ տեղեկատվություն:

2. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանին՝ ապահովել գործատուի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված պատասխանատվության վերանայմանն ուղղված աշխատանքների իրականացումը՝ հարցը ներառելով ՓՄՁ զարգացման խորհրդի հաջորդ նիստի օրակարգում:

Օրակարգային հարց 2՝ Հարկային օրենսգրքում փոփոխությունների փաթեթ՝ բիզնեսի կողմից բուհերին, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններին նվիրաբերությունների ծավալը մեծացնելու նպատակով («ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ).

1. Զեկույցներ ներկայացրին՝

1) ՎՋԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը՝ ներկայացնելով տարբեր շահագրգիռ կողմերի հետ իրականացված աշխատանքները, դրանց արդյունքում վեր հանված որոշակի կարգավորումները, որոնք

չեն նպաստում Հայաստանում գործող ԲՈՒՀ-երին և կրթական հաստատություններին նվիրատվության ինստիտուտների զարգացմանը:

2) «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Հայկ Չոբանյանը՝ ներկայացնելով նախագծով առաջարկվող կարգավորումները, այդ թվում՝ ակտիվների տրամադրման անհատույց գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան 0 սահմանելու և շահութահարկ վճարողներին՝ իրենց համախառն եկամտի մինչև 2.5%-ի չափով հանրակրթական դպրոցներին, ԲՈՒՀ-երին և միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվությունները շահութահարկով հարկման բազայից նվազեցնելու հնարավորություն տրամդրելու վերաբերյալ:

3) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հրաչյա Զաքոյանը՝ ներկայացնելով բիզնեսի ներկայացուցիչների կողմից բուհերին գույք նվիրաբերելու արդյունքում հարկային պարտավորության առաջացման հետ կապված խնդիրները, որոնց կարգավորումը որոշակիորեն կնպաստի կրթական հաստատությունների գույքային պահանջների բավարարմանը, մյուս կողմից՝ կստեղծի կրթություն-բիզնես ամուր կապերի հիմք:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) Ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանը նշեց, որ Ֆինանսների նախարարությունը հատվածային լուծումներ առաջարկելու փոխարեն հակված է ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացմանը: Անդրադարձ կատարեց նմանատիպ կարգավորումների ներկայացման հետ կապված մի շարք ռիսկերի՝ ներկայացնելով նախագծի վերաբերյալ Ֆինանսների նախարարության ունեցած վերապահումները:

2) ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը ընդգծեց այն հանգամանքը, որ փոփոխությունների արդյունքում առաջարկվում է ոչ թե գործարքն ազատել ավելացված արժեքի հարկից, այլ սահմանել, որ վերջինիս հարկման բազան զրո է: Հավելեց, որ առաջարկով ենթադրվում է, որ ցանկացած պարագայում պետությունը 20 տոկոսի չափով մասնակցում է նվիրաբերությանը, ինչի նպատակահարմարությունը լրացուցիչ հիմնավորումների կարիք ունի:

3) Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը նշեց, որ նմանատիպ կարգավորումներ մշակելիս անհրաժեշտ է բացառել պետության աջակցությամբ կրթական

հաստատությունները ֆիզիկապես և բարոյապես մաշված գույքով համալրելու հնարավորությունը:

4) ՎԶԵԲ՝ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանն առաջարկեց սահմանել նվիրաբերվող գույքի ոչ թե պարտադիր նոր լինելու, այլ որոշակի ժամկետից հին չլինելու մասին դրույթ:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանին՝

1.1. Համագործակցելով Պետական եկամուտների կոմիտեի հետ՝ ներկայացնել նախորդ տարիների ընթացքում բիզնեսի կողմից բուհերին ցուցաբերված աջակցության արդյունքում ավելացված արժեքի հարկի մասով առաջացած հարկային մուտքերի մասին վիճակագրություն:

1.2. Շարունակել նախագծի խնդրահարույց դրույթների շուրջ շահագրգիռ մարմինների հետ քննարկումները՝ դրանց վերաբերյալ լուծումներ առաջարկելու և առաջիկայում վերջնական տարբերակը Կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

Օրակարգային հարց 3՝ Մշակող արդյունաբերությամբ զբաղվող ընկերությունների կողմից նոր աշխատողների, այդ թվում՝ աշխատանքային փորձ չունեցող կամ վերարտադրակավորման կարիք ունեցող անձանց ներգրավումը և աշխատանքային պայմաններում ուսուցումը խրախուսող միջոցառում.

1. Զեկույց ներկայացրեց՝

1) «Համաշխարհային ազատ տնտեսական գոտիներ» հասարակական կազմակերպության տարածաշրջանային ղեկավար Նիկա Մանուկովան՝ նշելով մշակող արդյունաբերությամբ զբաղվող ընկերությունների կողմից աշխատուժի շարունակաբար աճող պահանջարկին զուգահեռ առանց լրացուցիչ գործնական գիտելիքների տրամադրման կամ վերարտադրակավորման նոր աշխատողների ներգրավման բարդությունների մասին: Հավելեց, որ միջոցառմամբ որպես լուծում առաջարկվում է մշակող արդյունաբերության ճյուղի գործատուներին փոխհատուցել ՀՀ ռեզիդենտ այն ֆիզիկական անձանց 12 ամսվա աշխատավարձերի և դրան հավասարեցված այլ վճարումների նկատմամբ հաշվառված և գանձված եկամտային հարկի գումարը, որոնք 12 ամսվա ընթացքում անընդմեջ այդ տնտեսավարողի հետ գտնվել են աշխատանքային հարաբերությունների մեջ, իսկ աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելուն

նախորդող երեք ամսվա չեն գտնվել աշխատանքային հարաբերություններում որևէ տնտեսավարողի հետ:

2. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) Ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանն առաջարկեց դիտարկել նոր աշխատողներին կրթելու կամ վերապատրաստելու ավելի հասցեական մեխանիզմներ:

2) Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը նշեց, որ ներկա ձևակերպումներով նախագծի ընդունման դեպքում կարգավորումների իրագործման դեպքում ի հայտ են գալու բազմաթիվ խնդիրներ:

3. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանին՝ համագործակցելով ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանի հետ՝

1.1. հստակեցնել առաջարկվող միջոցառման ֆինանսական գնահատականները,

1.2. ուսումնասիրելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կիրառվող նմանատիպ մեխանիզմները՝ վարչարարությունը պարզեցնելու նպատակով դիտարկել ծախսային աջակցության գործիքի ներդրման հնարավորության հարցը:

Օրակարգային հարց 4՝ Օպցիոնի պայմանագրի հասկացության և դրա կիրառման հիմնական պայմանների սահմանում, օպցիոնի պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծում («ՀՀ քաղաքացիական օրենսգրքում», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ).

1. Զեկույցներ ներկայացրին՝

1) «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ներկայացուցիչ Արամ Խաչատրյանը՝ ներկայացնելով օպցիոնի պայմանագրի հասկացության և դրա կիրառման հիմնական պայմանների սահմանման, օպցիոնի պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծման կարևորությունը:

2) ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանը՝ ներկայացնելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվող դրույթների մանրամասները: Նշեց, որ օպցիոնի պայմանագրի հասկացությունը և դրա կիրառման հիմնական պայմանները սահմանելիս հիմք է ընդունվել աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ ձևավորված գործարար պրակտիկան:

2. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանին՝ ապահովել աշխատանքների ընթացքը և փաթեթի հետագա շրջանառությունը՝ վերջնական տարբերակը Կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

Լրացուցիչ օրակարգային հարցեր.

1. Տեղեկատվություն ներկայացրեց՝

1) «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Հակոբ Ավագյանը՝ մտահոգություն հայտնելով Պետական եկամուտների կոմիտեի կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով հատուկ հարկման համակարգում գործող տնտեսավարողների համար վատթարացող նորմերի սահմանման վերաբերյալ:

2) «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Հակոբ Ավագյանը՝ առաջարկելով վերանայել ՓՄՁ զարգացման խորհրդի գործունեության ձևաչափը, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության խորհրդի անվանումը:

2. Փոխվարչապետի կողմից հանձնարարվեց՝

1) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանին՝ Պետական եկամուտների կոմիտեի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության և ՓՄՁ զարգացման խորհրդի այլ անդամների մասնակցությամբ քննարկման առարկա դարձնել Պետական եկամուտների կոմիտեի կողմից շրջանառության մեջ դրված փաթեթը՝ նմանատիպ փոփոխությունների նախաձեռնման ընթացքում կարևորելով մասնավոր հատվածի հետ երկխոսությունը:

2) Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանին՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության և ՓՄՁ զարգացման խորհրդի մյուս անդամների հետ համատեղ ենթախորհրդի

հերթական նիստում քննարկման առարկա դարձնել ՓՄՁ զարգացման խորհրդի գործող ձևաչափը և Փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի կատարման ընթացքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

18.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ